որի ակունքը կոչւում է Շահ-բուլախ (աղբիւր)։ այս առուակի սկզբնական ձորերը կոչւում են Վարդերեսի դաշտեր եւ հովիտներ (Գիւլ-իւղ-գիւղ)։ Այստեղ գտնւում է Գնդա, Գօլա, Գիւնէյա, Շահի եւ ուրիշ բազմաթիւ աւերակ եւ կիսաւեր վանքեր, որոնք կարծես հաստատուել են Արփա առուակի եւ նորա հետ զուգընթաց գնացող ջրանցքներին հսկելու։ Բայց ամէնից հետաքրքրականն է Մարիամ-Աստուածածին վանքը, որ կանգնած է Թէքէ-Տոլդուրան լեռան ստորոտում եւ հսկում է միւս վանքերին։ Դար-Ալագեազի (Վայոց ձորի) տաճարներին եւ վանքերին թիւ չկայ, բոլորն էլ աւերակ եւ կիսաւեր։ բայց նկատելի է, որ հին ճոխութեան փշրանքը անջնջելի է եւ ամէն տեղ էլ Վիշապագանց-Մեծամօր յիշատակները նկատելի են։ Այդպէս շարունակելով Նախջեւան, Ալինջա, Գիլիան, Դիրնիս եւ Ադուլիս առուակների ակունքը, ամէն տեղ նկատելի են Երկնային ջրերի, հաղարաւոր առուակների եւ բիւրաւոր աղբիւրների անջնջելի հետքերը։ Այս կենսատու ջրերի արեւարաշխին Սեւանի լճի շրջապատում տպրող հողագործը, մանաւանդ Գողթան երգիչները երբեք չեն կարողացել մոռանալ եւ մեր պատմագրի՝ Մ. Խորենացու օրով այնքան հետաքրքրական են եղել, որ Դաւիթ Բագրատունին պատմագրից բացատրութիւն է պահանջում այս վիշապագանց մասին եւ